

սովորական խօսակցութեան մը մէջ անգամ իրենց ձայնը Թարապէայէն կը լսուի: Հաստանդամ մարդիկ են, շատ կապրին. անուշօանուշ հայիոյէլ մը ունին:

–Ողջ ըլլան: Կիներն ի՞նչպէս կեանք կ'անցունեն:

–*Եազմա* կշինեն, կծախեն եւ երիկնին կնային: Ուրիշ թաղերու մէջ՝ գործը կարգին դնողն միայն կկարգուի, որ կարենայ իւր կինը ապրեցունել. հոս հակառակն է. ապրուստը ճարել չկրցողը կկարգուի, որ կինը զինքը նայի: Հոս պճնասիրութիւն, բամբասանք, շռայլութիւն, թատրոններ, զբօսարաններ չկան. հոս կեանքն անմեղ է:

–Մեծապէս շնորհակալ եմ տուած տեղեկութիւններէդ:

–Օդը շատ քաջառողջ է. եթէ առջի իրիկուրնէ երկու օխա օդի խմես՝ առտուն անանկ թեթեւ կ'արթննաս, որ կկարծես թէ առջի գիշերը բան մը խմած չես. շատերը հոս կու գան օդի խմելու:

–Շնորհակալ եմ:

–Եթէ վարժարանին համար նուէր մը ընես՝ ես ալ շնորհակալ կ'ըլլամ:

–Եկո՛ւր սա ձուկը մի՛ փախցունէր, աղա:

–Սա *ստաբօզն* առ ու օդիի *մէզէ* ըրէ, տղա՛ս:

–Սա *քէֆալը* չառնե՞ս:

–Պէտք չունիմ, ըսի եւ ինքզինքս նաւակի մը մէջ նետեցի:

Թ.

ՍԷԼԱՄՍԸԶ

Ահա վիճարանելու, հայիոյէլու եւ իրարու զլուխ պատառելու յարմարութիւն ունեցող թաղ մը, որու մէջ մարդս եթէ վայրկեան մը մնայ՝ ինքզինքն ազգային երեսփոխանական ժողովոյ մէջ կկարծէ եւ դուրս ելնելու ճար մը կմտածէ: Հարցո՛ւր սա թաղեցւոյն, թէ ի՛նչ է այս անսպառ վիճարանութիւններու պատճառն, եւ վստահ եղիր, որ հետեւեալ պատասխանը պիտի առնես.

«Սահմանադրութեան գործադրութիւն»: